

# ՀԱՅ ՍՎԱՌԻՏ

ՊԱՏՈՒՄԱՆԱԿԱՆ ԿՐԹԵՐՄԱՆ ԹԵՐԹ

ՏԱՐԵՎԱՆ ԲԱՅՆՍԵՐԻՆ ԳԱՆՆԻԿ

Երանուա . . . . .	25 ֆր.
Խոչիա, Յակոբյան, Գալ. Յաննիսյ . . . . .	20 ֆր.
Միսո բազար երկրորդ . . . . .	30 ֆր.

(Վեցամսեայ ըստիմի)

ՀԱՏԸ ԳՆՈՒՄԻ 1 25 ֆր.

## Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Կ

Սկսուածիան վերին Մարմնայն եւ «Հայ Սկսուած»ին վերաբերեալ գրամ,  
ապահովուցրած մասակ, յօդուած, թղթակցութիւն, դրկել հետեւեալ հասցեով՝

**Mr. M. KURKDJIAN,**

**39, rue Maubeuge,**

**PARIS (9°).**

«ՀԱՅ ՍՎԱՌԻՏ ԿԸ ՆՈՒԻՐԻՆ» ցանկով պիտի գնենք այն ազնիւ անուաները,  
որոնք մեր թերթը քաջայերելու, եւ տարածելու համար նիւթապէս կ'օգնեն անոր  
ծաւալումին, բաժանորդագրուելով սեւէ հայ աղքատիկ հաստատութեան մը,  
կամ վարժարանի մը ի նպաստ:

Թերթիս վարչութիւնը մասնաւոր զեղչ կ'ընէ ազգային բոլոր հաստատու-  
թիւններուն, երբ իրենք ըլլան ուղղակի վճարողը՝ պահանջելով 20 ֆր. տարեկան  
բաժնեգին:



# Շ Ա Յ Ս Կ Ա Ո Ւ Տ

ԿԻՍԱՄԱՆԱՅ ԹԵՐԹ



Գ. ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 1 ԱՊՐԵԼ 1—15 1934

## Հ Ա Յ Պ Ա Տ Ա Ն Ի

Քառական ժամանակ է որ դուն անձկանօք կը սպասէիր Հայ Սկաւառին. կ'ուզէիր որ նա փութով գար վերստին խօսելու եռանդուն սրտիդ, բանալու համար սոջեղ բարձր գաղափարներու լայն հորիզոններ, կրթելու եւ ազնուացնելու հոգիդ ու մարմինդ:


Ահա կրկին քու ձեռքդ է նա, լի էրիտասարդական խոստումներով, անխախտ հաւատով իր հեռաւոր ապագային, եւ անընկճելի կամքով մ'օժտուած՝ ապրելու, ապրեցնելու քեզ հետ եւ քու մէջդ հազարաւոր դալարագեղ հայ մանկութիւն մը:

Անկեղծ յուզումով է որ ձեռքդ կուտանք այս քերթը, համոզուած քէ քեզ համար հայ օնախ մ'է որ կը վառենք որպէսզի դուն ալ ձուլուիս գաղափարի նոյն հոգիով հետու եւ մօտ եղբայրներուդ հետ, ու սորվիս գոհաբերել ինչպէս որ հայութեան խորանին:

Մեր բոլոր յոյսը, նպատակը դուն ես, հայ պատանի, միայն քու մէջդ կուգենք տեսնել ուրոնացած մարմնական գեղեցկութեան մը հետ, մեր ցեղային առաքինութիւնները, աստուածավառ հաւատք մը եւ քաղաքացիական բարձր նկարագիր մը, ինչպէս կոչումն է նշմարիտ սկաւառի մը:

Քու բարոյական եւ նիւթական գործակցութիւնդ պէտք է որ ամբողջովին տրամադրես հասարակաց օգտին, մենք պէտք ունինք եռանդուն սրտերու, երկաթի պէս պինդ կամքերու ու կարգապահ եւ հեռզանդ Հայերու. վասն զի կ'ուզենք որ, ուր ալ ըլլաս գեղ օրինակ առնեն ուրիշները, ու քեզմով հանչան ազգդ իր ամենադժբախտ օրերու մէջն ալ, աննկուն եւ պաշտելի:

Տասնընկուց սկաւառական տարիներու անցեալ մ'ունինք մեր ետերը, համակ կենդանութիւն եւ



18  
15  
322-2000



խոյանք. այդ անցեալը վաղուան  
ապահով յաջողութիւնն է, ինչպէս  
մեր Սկաստներու եւ Մարգիկնե-  
րու գեղեցիկ տիպարները մեր լա-  
ւագոյն ներշնչարանը պիտի ըլլան  
այսօր եւ վաղը:

Չորս երկար տարիներ, ժամա-  
նակներէն հարկադրուած, մենք ի-  
րարմէ անջատ եւ անհաղորդ մնա-  
ցինք. քայլեցինք օտար քաղաքնե-  
րու եւ գիւղերու մէջ բարոյալուծ  
եւ աննպատակ, քախծոտ մնացինք  
ուրիշներու ուրախութեան ժամա-  
նակ, որովհետեւ չունէինք վայր  
մը ուր հանդիպէինք իրարու, պատ-  
մէինք մեր ուրախութիւններն ու  
ցաւերը:

Ահա ասկէ վերջ քու միակ սի-  
բեի ժամադրավայրդ *Հայ Սկաստ-*  
*անն* մէջ, ուր որ ալ ըլլաս, Հայ  
պատանի, մեր բերքը քու ամենէն  
հաւատարիմ եւ անկեղծ ընկերդ  
պիտի ըլլայ. հոն պիտի գտնես հե-  
ռաւոր եղբայրներուդ անուններն  
ու խօսքերը որոնք քեզ համար տաք  
ու մտերիմ լեզու մը կը խօսին:  
Այդ բերքին մէջ պիտի հաւաքուին  
մեր ցրուած ուժերը, հոն պիտի  
գանք իրարու կողքի, ձեռք ձեռքի,  
եղբայրօրէն սրտակից մէկ ազգի եւ  
մէկ տան գաւակներ:

Կը խոստովանինք որ, Հայ պա-  
տանի, քու քազմաի բերանացի եւ  
գրաւոր դիմումներդ են որ գմեզ  
քաջալերեցին, այս կեանքի տագ-  
նապալից օրերուն, հրատարակել  
*Հայ Սկաստ*ը, որովհետեւ քու  
բախանձանքիդ խորը կարգացինք

քեզ պէս բիւրաւոր հայ մանուկնե-  
րու սրտառուչ աղաղակը, որ իրեն  
յարմար լեզուով եւ նիւթերով, ո-  
գեւորոզ բերք մը կ'ուզէր ունե-  
նալ:

Այո՛, պիտի տանք քեզ մանկու-  
թիւնդ քաղցրացնող գրօսեցուցիչ  
էջեր, սորվեցնելով քեզ սիրելի խա-  
ղեր ու պատմութիւններ:

Պիտի տանինք երբեմն գեղ մայր  
բնութեան ծոցը հոգիդ ու սիրտդ  
նրբացնելու ծաղիկներու փափկու-  
թեան մէջ, հոն պիտի տեսնես թէ  
մեզուն ի՞նչպէս կ'աշխատի, մը-  
ջիւմն ինչո՞ւ կը վազէ. մանաւանդ  
կապոյտ երկնքի եւ կանանչ դաշ-  
տերու լայն պարզութեան մէջ պի-  
տի սորվիս ըլլալ պարզ, մաքուր,  
վեհանձն ու միշտ դալար, ինչպէս  
շուրջդ բացուող մայիսները:

Ինչո՞ւ ամենէն շատ դուն պիտի  
սիրես այն էջերը ուր հպարտօրէն  
կարդալով ազգիդ պատմութիւնը,  
իր հին ու նոր փառքերով, ճակատդ  
բարձր, հոգիդ լեցուն վարդաննե-  
րու, վահաններու, Անդրանիկնե-  
րու մեծութեամբ, նախանձախնդիր  
պիտի ըլլաս ազգիդ անունին ու  
պատուին, գայն պիտի սիրես տանդ  
մէջ, ամէն տեղ հայութեամբդ  
պարծենալով:

Քեզ կը մնայ ուրեմն, պատանի  
սկաստ, հոգեւին նուիրուիլ քու  
բերքիդ, կարդալ ու կարդացնել  
գայն ընկերներուդ եւ բարեկամնե-  
րուդ. երկարէ՛ խանդավառ ձեռքդ  
ու հպարտօրէն բարեւէ գայն:

«ՀԱՅ ՍԿԱՍՏ»



3934-57





## ԲԻՆԿԵՑԼ

Բիւրակն՝ այն բարձր եւ անմասն լեռն է, որ Մեծ եւ Փոքր Հայաստանի կեդրոնը կամ սրտի վրան բուռած է, եւ որ ամէն հիներէն եւ նորերէն (սլամապիններէն) կը համարուի Ազամայ Եղեմ դրախտը:

Ինքն անկող է (անմասն) Տօրոսի լեռներու գօտիին, եւ Ծագկեաց լեռներու շխալին: Ասոր գագաթը ելլողը կը վաշխէ անապակ օդ, շատ ջինջ կ'երեւայ իրեն երկնքի եթերը, քիչ մը դէպ Վ վար իջեցնելով իր աչքերը շուրջանակի կը աւանջ Հայաստանի ամէն կողմերը, կ'ողջունէ Մասիսները եւ Արագածը համայն հիւսիսային եւ արեւելեան կողմերով: Արմաւիրի եւ Դունայ աւերակներու փոշիները կը նշմարէ իրրեւ արեան շողին շամանդաղը (մշուշ), որ կուգան հոտաւէտելու այս լեռան անթիւ ծագիկներու կուկուններն ու թերթերը:

Այսանդ Անիին դմբէթներուն ու բերդերու բեկորներուն վրայ վայոյզ բուերու արձագանդն ու սոյլը Բինդէօլի բիւրիւններուն եւ հովուական սրինգներու ձայները անուշացնելու: Վասպուրականի ծովը, Տիգրանակերտն իր Միջագետով, Ծովք, Բալայ հովիտը, Երիզա՝ Գերջանով, Կարինը կրկին Բասենով՝ Բինդէօլէն կ'երեւին սրտեսներուն եւ ասանք Բիդէօլէն ջուր կ'ընդունին:

Արդէն Վարդօ, Մնուս, Շուշար, Գօյնուզ, Քղի, Ճապաղջուր, Կարնոյ հովիտը, բոլորն ալ Բինդէօլի ածուներն են. եւ բնակիչները անկէ իրենց հացն ու ջուրը կ'ընդունին:

Տեսե՞ր ես հայոց հին քերականներուն

մէջ հալտը (ծերունի) Յակոբ նահապետին պատկերը, որ ընկողմանած կը քննայ, եւ իր պորտէն ծառ մը կը բարձրանայ բազմաստեայ, եւ ստերուն վրայ պողպտներն են Իսրայէլի նահապետներն ու թագաւորները: Տո՛ւր Հայաստանին ալ այդպիսի այրական պատկեր մը, որ ընկողմանած ըլլայ իր պատեկին (կոնակ) վրայ, անոր դանկն բրէ Մասիսը, եւ ապեղնածեւ դաշան Արարատայ՝ անոր յօնքիը: Պինչերը կամ անդունքը՝ ծով Կասպեանն եւ ծով Գեղամայ (Սեւան), իսկ աչերը դասն ու ազի լիճեր Ուրմեայ եւ Սելթամարայ: Իր մէկ թեւը տարածէ հիւսիսէն Կասպից ծովի ափերով, եւ ձեռքի ստաները ցից սլահելով՝ կը ձեւանայ ովկասը, հարաւէն Վասպուրականի սահմանադիտով սրարդէ իր միւս թեւը մինչեւ Ծոցը Պարսից, եւ թաթիկը բացած ըլլայ Միջագետք եւ Թէւրայ դաշտը: Իր ոտները ձիւք երկարցուցած հասնի մինչեւ Կասպաղովկիա եւ Կիլիկիա, եւ այն ժամանակ Բէնդէօլը այդ պատկածին ճիշդ սրտան եղած կ'ըլլայ: Միւս լեռները դիւրին է յարմարցնել կողերուն, սրտի տախտակին, թոքին, պոլոճիկներուն եւ ողնաշարին: Գետերն բրէ՛ արեան երակ, եւ անտառ ու մացառ՝ անոր մորթի մագերը, եւ այլն: Բայց քնացած եւ ընկողմանած ըլլայ ան, ոչ թէ արթուն եւ ոչ թէ ոտքի վրայ, ոչ շախատի, ոչ ուտէ, ոչ իր տեղէն ու դիրքէն երեւայ: Ծնչ միայն, եւ լեռքերը արտիեն, սիրար բարախէ, բաղկերակը դարնէ եւ պորտը բաց ու խուփընէ:

Բինդէօլը դժնդակ տարաարտս (ստամոսանիք) մըն է ձմեռուայ եղանակին, եւ դրախտ՝ դարնան եւ ամբան: Բինդէօլը ղեհ եւ ահաւոր չէ, այլ սիրուն. թագա-



ւորի շի նմաներ այլ թագուհիի. քնքոյշ է եւ փափուկ. կոյս մըն է պճնադարդ եւ փափկասուն. շնորհքի լեռն է քան թէ քաջերու եւ դիւցազներու. ասոր համար իր վրայ եղած վէպերը ոչ Ազնաւուրի, ոչ դեւի, ոչ յաղթողի եւ ոչ զինուորի նախագաւորի են, այլ սիրոյ, գուարճութեան, ատողջութեան, գեղեցկութեան եւ դարդի, անուշութեան, պարարտութեան եւ գուսանի(երգեցողութեան) : Որովհետեւ անոր բիւր ազրերակներուն եւ հազարակերուն բոլորը սիւր տեսակ բոյսեր եւ ծաղիկներ փռուած են : Զրարբի մարդեր, սմենադալար բանջարներ եւ խոտեր իրենց արմատներով՝ ուտելու, բուժելու, դոյն-դոյն ներկելու կը գործածեն. իր վայրի կենդանիները՝ առիւծ ու վազը չեն, այլ եղնիկ եւ այծեամ :

Հան կովերը, մատակ ձիերը եւ մաքիւնները հօտով կ'արածին, հորթ, քուտակ եւ գատներ կը ծնանին : Հաւերը իրենց ձուերը ծաղիկներու բոյլերուն (խումբերուն) մէջ ածելով թուխ կը նստեն, եւ ձագերով կը թռչտին :

Հոս գրօսասէրները կուզան ուրախանալու, հիւանդները օգը եւ ջուրը ծծելով՝ կեանքը նորոգելու, կոյսեր եւ հարսները՝ ձեռքադործի թելերը ներկելու համար ծաղիկ եւ արմատ ժողովելու, ժրջան տանտիկիները բանջար ժողովելու, լժիշկները՝ դեղ ու դարմանի համար ամէն բոյսէն ծիլ մը կամ ծաղիկ մը կամ խուփ մը առնելու, իսկ մեղուններու արդ-դոցն ու բոցոցը հիանալի դաշնակութիւն մը կուտան մարդոց եւ թռչուններու երգչուն, անասուններու բառաչին, գորտերու կառաչին, գլղլացող առուակին ու սուրացող սիւրբի ձայնին : Անթիւ, անհամա՛ր մեղուններ : Բայց միեւնոյն ժամանակ օձերն ալ կը սողոսկին այդ ծաղիկներու կողակի քովերէն, իրենք ալ կ'ստնեն միեւնոյն ծաղիկներէն հիւթը եւ կը վայելին սուրբ օգը : Հոս մեղուններով մեղր կը շինուի, եւ օձերով՝ թոյն :

Տաճկերէն լեզուով գովասանք՝ Տէսունն խաղ մը կայ Բինգէօլի վրայ, գոր

չատ դաւաններու շնակիչներ գիտեն եւ արտագին ու միամիտն եղանակով մը կ'երգեն, սրուն սկիզբն է «Ազալ բահար աչըլտի» եւ նազարաթն է «Ալսար կիտէր Բինգէօլի» :

Աքանչելի նկարագիր եւ զիմառնական (ուրիշի բերնէն խօսող) ոճ մը ունի այս խաղը, սրով լերան բարեվայելչութիւնը կը գովէ երգիչը, եւ Արարատները կը հրաւիրէ հոն Աստուծոյ սքանչելիքը տեսնել, վայելել, կեանք առնել. թէ՛ Բինգէօլը ինչպէս անմահական ջուրեր կը բաշխէ երկրին, եւ այլն :

Քիւրտ հովիւ մը Բինգէօլի լեռը դաւներ կ'արածէ եղեր, օր մը կը տեսնէ որ մէկ վիրաւորուած, մէկ ջախջախուած եւ մէկ ալ բոստած օձեր կուզան ջրերու ահունքներէն մէկին ավր, ծաղիկէ մը մէկ մէկ թերթ կը փրցնեն կ'ուտեն եւ մտնելով այն ջուրին մէջ կը լողանան, բաւական ատեն մնալով ջուրին մէջ : Հովիւը՝ որ անթարթ աչքով կը նայէր անոնց, յանկարծ կը տեսնէ որ երեքը մէկէն առողջ, ստույգ եւ աշխոյժ սողալով դուրս կ'ելլեն ջրէն՝ տպաքինած եւ արագ աքաղ կը սահին կ'անցնին հովուի աչքէն անհետ :


Այս հովուին սէրը երեւելի հարուստ քիւրտ մըն է եղեր, երկար ժամանակէ ի վեր բոստած ախտացած. կը վազէ հովիւր եւ իր տեսածը պատմելով, կը վերցնէ տէրը կը բերէ այնտեղ, բայց անհեարին կ'ըլլայ հովուին ճանչնալ թէ ո՛րն է այն ծաղիկը եւ այն աղը : Եւ որովհետեւ մէկ չէ, հագար չէ աղբիւրն ու ծաղիկը այն տեղին, որ փորձի համար ուտէր եւ խմէր ու միեւնոյն ատեն թունաւորուելէ ալ կասկածելով, խեղճ բոստ քիւրտը կը նեղանայ հովուին թէ՛ ինչո՛ւ չէ կրցեր նշանակել, միտք պահել ծաղիկն ու աղը :

Հովիւր կը պատասխանէ. « Բինգէօլ, հէզար գէօլ, աղ չի՞ գանրմ քիժան գէօլ » . — Բիւր ահն, հաքար ահն, ես ի՞նչ գիտեմ ո՞րն է այն ահն :

Եւ այս է եղեր իբր թէ տեղւոյն անասանակոչութեան սկիզբը :

Գարեգին Եպիսկ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ





## ԱՌՈՂՋ ԵՒ ԶՕՐԵՂ, ԸԼԼԱԼ

Ահա գեղեցիկ հարց մը, անշուշտ որ բոլորդ ալ կ'ուզէք առօջ կե և ուժեղ ըլլալ, որպէսզի կարենաք ծանր բեռ մը վերցնել, փայտ կոտրել եւ պէտք եղած միջոցին թաշեցուցիչ բառնցքի հարուած մը իջեցնել: Եւ յետոյ բոլորը կը դժայլին ձեր վրայ, կը յարգեն ձեզ, կը գովարանեն ձեր մկաններուն հաստութիւնը, ուսերուն լայնքը, քալուածքը, վերջապէս, ձեր անցքին բոլորը գմայլանքի բացագանչութիւններ կ'արձակեն:

Եւ յիրաւի, գորեկ ըլլալուն մէջ յոյժ օգտակար պայմաններ կան, եւ որ ամէն ազայ կ'երազէ ուժեղ ըլլալ, աշխարհիս ամենաուժեղ մարդը դառնալ, որպէսզի սկարներուն, ծերերուն, մանուկներուն ու թշուառներուն օգնութեան հասնի, որպէսզի անբարտաւան, անկիրթ եւ կոշտ ու կոպիտներուն փառաւոր դաս մը կարենայ սալ, անոնց սորվեցնելով յարգելու ճշմարիտը, բարին ու գեղեցիկը: (Գոնէ երազին մէջ, այս է իրականութիւնը):

Եթէ ինձ հարցնէք, անձնապէս, մեծ յարգ չեմ տար աշխարհիս ամենագորաւոր մարդուն, որովհետեւ ան, վստահ իր մկաններուն, առաջուց զիտէ թէ, ամենքին, առանց յոգնութեան կրնայ յաղթել, կը նմանցնեմ զինքը, հանդիպած առաջին մսագործին, որ վստահ է թէ, իրեն յանձնուած գառնուկ, ոչխար, հորթ թէ կով պիտի կարենայ դիւրութեամբ սպաննել (անշուշտ մեր սնունդին համար), այդ մասին առածը կ'ըսէ «Առանց դժուարու-

թեան ու վտանդի տարուած յաղթանակը անփառունակ դափնեպսակ կ'արժէ» , «անպտուղ ծառ մ'է»:

Էաւ հասկնանք զիրար, երբ ձեզ կը հարցնեմ թէ կ'ուզէք գորաւոր ըլլալ, բընաւ նպատակ չունիմ ձեզ աշխարհիս ամենագորաւոր մարդը դարձնել, այլ նըստաակս է գորեկ մկաններ եւ ձեւաւոր մարմին մը պաղեւելու միջոցները ցոյց աւալ ձեզ: Վստահ եղէք, երբեք ձեզի ձկան-իւղի եւ կամ դանդաղան դեղահատներու մասին չէ որ պիտի քարոզեմ, որովհետեւ այդ բոլորը առօջ ու կանոնաւոր պատանիներու համար չեն. այլ իմ բսելիքներս այն մասնաւոր յատկութիւնն սլ ունին որ ո՛չ մէկ ծախսի կը կարօտին, ինչ որ սկառուտական դաւանանքին 11րդ եւ 12րդ յօդուածները լիուրի գործադրած կ'ըլլանք: Վստահ եմ որ գուշակեցիք. այդ միջոցը մարմնամարզն է:

Հոս սրգտիկ մէջբերում մը. կը ճանչնամ 13 տարեկան սկառուտ մը, որ միշտ հետեւեալ երգը կ'երգէ՝

Զօրաւոր ըլլալու համար  
 Մկաններ շինել  
 Մարզանքներ ընել  
 Մրցանիշ կոտրել:

Իրեն յորդորեցի որ, այդ երգի վերջին տողը հետեւեալ կերպով փոփոխէ. «առանց մրցանիշ կոտրելու»:

Խնդրին իսկական լուծումը հետեւեալն է՝ մարզանք ընել, շարժիլ, բացօդեայ



պատյաններ, ծառէ ու պատէ վեր մազլ-  
ցիլ, ցատկեւլ, վազեւլ, լողալ, ըմբշա-  
մարտեւլ, կրեւլ, նեակեւլ, եւ այլն, եւ այլն,  
սակայն ըրբօր շինելու սիրուն, ձեր ջի-  
ղերու ու մկաններու ուժը, մինչեւ վեր-  
ջին աստիճանի մի հասցնէք, ամենարագ  
վազող, ամենածանրը վերցնող, ամենա-  
արագ հեծանաւորը ըլլալու ճիգէն վերջ,  
կը տուժէք ու կը զղջաք, եւ մէկ յաջո-  
ղութեան վրայ հարիւրաւոր զոհուողներ  
կ'ըլլան, սակայն, աւա՛ղ, շատ ուշ կը  
զղջաք: Կարծեմ հասկցաք, եւ ահա հող է  
սկառուարի մի մեծութիւնն ու բարեբարու-  
թիւնը:

Սկառուարի մէկն դուրս մնացած անթիւ  
պատանիներ, 13էն 14 տարիքը հազիւ թե-  
ւախիսած, իրենց ունեցած պղտիկ յատ-  
կութիւններու զովասանքէն տարուած,  
«մարդիկ» անուան տակ կ'երթան, այս  
կամ այն ափօրի մը մասնազիտութեան կը  
հեռուին եւ ահա 100/90 սակով Ֆի-  
զիբապէս մի քանի տարիներ յետոյ կամ  
շատ տձեւ մարմին կ'ունենան, եւ  
կամ անդամներէն մին աներեւակայելի  
կերտով կը տկարանայ՝ սիրմէնաժի չար  
արգիւնքը, որ սրեւէ ափօրի միայնակ ուժ  
տալու անխուսափելի արգիւնքն է: Ին-  
չո՞ւ, որովհետեւ դեռ փոքր տարիքէն իսկ,  
գիտարանակ սկառուար խմբապետի մը բա-  
ցատրութեան ու հսկողութեան տակ կա-  
նոնաւոր ու պէտք եղած ընդհանուր մար-  
դանքներու հեռուելու ու մարմինը ներ-  
դաշնակօրէն ու համաչափ ձեւաւորելու,  
ի՞նչ կ'ընէ ֆութպօլիստը, «չլացումէ ու  
փառասիրութենէ տարուած, մեծ ուժ կը  
վասնէ, մարդական այդ ճիւղին մէջ, ա-  
նուն շահելու նպատակաւ, եւ յետոյ...: Եթէ  
վերոյիշեալ ցուցմունքիս վրայ, զործնական  
ակնարկի մը նեակէք, պիտի նշմարէք  
թէ, որքան իրաւացի եմ: Օրի-  
նակ մը տամ, Պոլիս, մեծ անուն շահած  
շամբիտն հեծելաւորը մը կը ճանչնա-  
յի, սակայն բառին բովանդակ ստուժովը,  
աշկարող էր, պար-Ֆիբսի մը, բարալլէլի  
մը եւ արարէզի մը վրայ քիչ մը աշխա-  
տել, նոյն իսկ 50 քիլոնոց պարկ մը դեռ-  
նէն ուսին վրայ վերցնել:

Եզրակացնենք, սկառուար, այն պատա-  
նին կամ երիտասարդն է, որ միշտ պէտք  
է պատրաստ եւ կարող ըլլայ լողալու,  
սուզուելու, մագլցելու, վազելու եւն-  
եւն, եւ այս ամենը ոչ միայն ծառայու-  
թիւն մը մատուցանելու համար, ուրիշին  
(Պաւանանքի Կող յօդուածը), այլ նաեւ  
իր հաճոյքին ու աստղջութեանը հա-  
մար. այսպէսով հաւասարակշռուած մար-  
մին մը կ'ունենայ, որ իրեն կը պարզեւէ  
հազար խոչընդոտներու՝ թշուառու-  
թեանց, հիւանդութեանց, անդամալու-  
ծութեանց եւն յաղթահարելու:

Բայց... բայց մը կայ, պիտի ըսէք,  
թէ առօրեայ կեանքին մէջ, դպրոցը, դոր-  
ծարանը թէ գրասենեակը, բնաւ ստեն չեն  
տրամադրեր մեզ այդ մարդանքները ընե-  
լու, որոնք անհամեմատութիւն են ջուրին,  
հացին ու արեւին նման. եւ ինձ պատաս-  
խանել թէ «անպայման, ամենքդ, առանց  
բացատրութեան, եւ ձեր սկառուար առաջ-  
նորդին պատրաստած մասնաւոր, անհա-  
սական մարդա-ուզեցոյցին համեմատ,  
ամէն առաւօտ մարդանք պէտք է ընէք:

ՀՄԸՄԵԱՆ 2000ի մօտ սկառուարներուն  
քանի հազին արդեօ՞ք կը կատարեն այդ  
առօրեայ փորձերը կանոնաւորապէս: Չեմ  
ուզեր թիւեր ըսել, որովհետեւ գիտեմ  
որ, անկարելի է հակադիտել այդ, միայն  
վստահ եմ որ, այն հարիւր հազարներու  
հասնող, եւ ճերմակ ու սեւ ջարդի են-  
թակայ, սրտասահմանեան հայ պատանի-  
ները, որ դեռ ՀՄԸՄի եզրայրակցութեան  
մէջ մտնելու բախտին չեն արժանացած  
(իրենց ծնողաց անհող անտարբերու-  
թեան մեղանշանքով), այս վերջին պա-  
տանի ու երիտասարդներուն մօտ համե-  
մատութեամբ դայլիի ու սկառուարներու,  
անմարդներ ու անպաղայ հիւանդ թեկնա-  
ծուներ աւելի շատ են:

Երբե՛ք չեմ կարծեր որ, դո՛ւք, հայու  
կրակոտ աչքեր ունեցող պատանիներդ,  
չուզէք զօրաւոր ըլլալ եւ ուզէք հիւանդ-  
կախ ճղճիմ արարածներ մեծնալ, ո՛չ եր-  
բեք: Ամենքդ ալ փափաք ունիք զօրաւոր  
եւ ներդաշնակ մարմին մը ունենալ: Եւ



զրեթէ ամէն սկաուտ գիտէ թէ ինչպէս  
կարելի է այդ ձեռք բերել, սակայն շատ  
քիչեր կը յանդգնին գործադրել դաշն:

Նիւթը շատ էական է, ուրիշ անգամ  
պիտի անդրադառնամ այդ մասին, մինչ  
այդ սակայն, կ'ուզեմ պզտիկ հարց մը  
դնել:

«Պէտք եղած ջանքը պիտի բնէ՞ք ձեր  
առաջնորդին կամ խմբապետին հարցնել  
ձեզի պէտք եղած մարդանքներու ձեւերը,  
գործադրութիւնն ու շափը. եւ դեռ աւել-  
ին, ըստ բաւականի քաջ պիտի ըլլա՞ք,  
եւ մէն ատուտ 10 վայրկեան աւելի կա-  
նուխ արթննալու, ձմեռ թէ գարուն, ա-  
մառ թէ աշուն, ու բացօդայ այդ մար-  
դանքները ի գործ դնել»:

Սէս՝ ձեզի վերնազիր հարցումիս պա-  
տասխանը:

Կ'ուզէ՞ք գորեղ եւ առողջ ըլլալ, բաւ,  
բայց...

- Կամք ու ջանք պիտի ունենա՞ք :
- Բարձրացէ՞ք եւ բարձրացուցէ՞ք:

### ՇՐՋԱՀԱՅԵԱՑ ԵՂՋԵՐՈՒ



## Գայլիկին անկիւնը

ԳԵՏԼԻԿՆԵՐԸ ՈՒ «ԲՆԱԿԱՆ ՄԱՐՁԱՆՔԸ»

Արդեօք մեր Աքէլաները նկատի ա-  
ռած են, ծեւփային սպայ Hebert ի քնա-  
կան մարդանքները, եւ ունի՞ն, իր «gaine  
Abrige du moniteur»):

Եթէ ո՛չ, լաւ կ'ըլլար որ, ժամ առաջ  
հայթայթեն այդ գրքոյկը ու ծանօթանան  
մարդական այդ գրութեան գործադրու-  
թեան:

Շուէտականը, բանասեղծ Աէնկի,  
այդ մեծ եւ ընդհանրացած մէթօտը որ-  
քան հին եւ սքանչելիք մէկ, ըստ իս լա-  
ւադոյն պիտի ըլլար որ մեր գայլիկները  
մարմնակրթանքի ասպարէզը մուտք գոր-  
ծեն Հէպէրթի նորագոյն եւ ոչ նուազ լաւ

գրութեամբ, որ արդէն ընդունուած է  
Ֆրանսական սկաուտ շարժումէն եւ բա-  
նակի մեծ մասէն. բանակի մէկ մասն ալ  
ժուանվիլի գրութեան կը հետեւի, ինչ  
որ առ այժմ դմեզ չի հետաքրքրեր:

Ի՞նչպէս գործադրել այդ բնական մէ-  
թօտը, հոյլերէն ներս, միայն խաղերու  
միջոցներով (վրայէ ոստում, գրօշար-  
չաւ, մէկ ոտք, եւն), թէ արշաւներու  
ժամանակացոյցին մէջ մասնաւոր միջոց  
մը յատկացնել մարմնակրթանքի համար:

Շատ մը ձեր գայլեր, հաւանաբար  
Ա. ձեւին կողմնակից ըլլան, սակայն անձ-  
նապէս կը նախընտրեմ Բ. բ: Ճիշդ է որ  
խաղերու միջոցին, գայլիկներով պէտք է  
կատարուի բարոյական, ուս. եւ մարմ-  
նակրթական զարգացումը, սակայն ձեր  
գայլը, այդ երեք նպատակները մէկտեղ  
հետապնդելուն, պէտք եղած ատենը, չէ  
չարոյ ձեռք բերել, մանաւանդ Ֆիզիքա-  
կան տեսակէտով: Նկատի ունենալով  
գայլիկի մը մատաղ կազմուածքը, պէտք  
է անոր ամառ խիստ պատշաճ կերպով,  
ու մեծ զգուշութեամբ սովորութիւն եւ  
լայն կուրծք, այսինքն, մարդակազմու-  
թեան սիւները՝ սիրտն ու թոքերը հաս-  
տատուն եւ սովուն գործարաններու վե-  
րածել, եւ ճիշդ այդ պատճառով, պէտք  
է առանձին բնական մարդանքի պահ մը  
ունենալ, սկսելու համար՝ 10 վայրկեան,  
առանց այլազանութիւններով ընդմիջե-  
լու, որպէսզի Աքէլան (խմբապետ կամ  
ուհի) այդ միջոցին զբաղուի միմիայն  
իր գայլիկներու Ֆիզիքովը: Երբ վերջին-  
ները քիչ մը սկսին վարժուիլ մարդան-  
քին, այդ ժամանակամիջոցը կարելի է  
բարձրացնել մինչեւ 20 վայրկեանի, եւ  
ամէն 5 վայրկեանը անգամ մը իրր հան-  
դարտութիւն, խիստ դանդաղ քալուածք  
եւ բայն շնչառութիւն: Քանի որ այս  
սքանչելի միջոցը, մեր գայլիկներուն գօ-  
շեղ վանդակ մը կը պարզեւէ, գործա-  
դրենք զայն մեր ամէն արշաւներու կամ  
բանակումներու ընթացքին, մասնաւոր  
սեղ տարով մեր ժամանակացոյցներուն  
մէջ իրեն:

Երջանիկ ու խանդավառ արշաւանք  
մազթելով երկսեռ Գայլիկներուն, ապա-



Գայլերուն, պիտի նշմարէք թէ որքա՞ն հաճոյալի պիտի գտնեն «մօկլիները» այս ձեւ մարգանքի պահելը:

ԵՐԿՆԱԿԱՄԱՐԸ, ԼՈՒՍԻՆԸ  
ՈՒ ԳԱՅԼԻԿՆԵՐԸ

Նկատի առա՞ծ էք խմբապետ եւ ուճիւներ, թէ՛ յաճախ Գայլիկ թէ Միծեռնակ, աչքերնին երկինք ուղղելով հանդերձ, շատ բան մը չեն կուսներ ոսկեայ զամբուով այդ առաստաղէն եւ կամ բնաւ չեն հետաքրքրուեր. ձեզի կը մնայ անոնց աչքերը բանալ, սորվեցնելով իրենց համար նոր հրաշալիքներ:

Ապրիլ ամիսը առնելով ( Փարիզ ), պրպտեցէք օրացոյցը լուսնի մասին, ինչպէս նաեւ Լառուսը եւ ուրիշ գրքեր, ու պիտի տեսնէք թէ 7 Ապրիլին շարաթ, ժամը 0.49ին լուսինը, վերջալուսինէ Արեւելքէն կը ծագի, առաւօտեան ժամը 7ին արդէն ձիւղ երկնակամարին կեդրոնն է հասած (հարաւ), ժամը 13ին՝ Արեւմուտք, ինչ որ հաւանաբար արեւի ճառագայթները իր տեսքը խափանեն. երեկոյեան 19ին ատենները կը գտնուի հիւսիս: Կրկին յաջորդ առաւօտուն ժամը 1.47ին Արեւելքէն ծագելու համար: Դիտել տուէք Գայլիկ ու Միծեռնակներուն

թէ՛ Բ. կիսալուսինը եւ վերջալուսինը իր ճակատն ու թագը, այսինքն կոտորները ունի միշտ արեւելեան կողմը եւ կրնաք նմանցնել զայն (ժ) գիրին: Իսկ Ա. կիսալուսինը եւ նոր լուսնի կոտորները դարձած են դէպի արեւմուտք (Բ) գիրին նման:

Ապրիլ 13ին նոր լուսին ժամը 23.57ին արեւելքէն կը ծագի:

Ապրիլ 21ին Ա. կիսալուսինը ժամը 21.20ին կը ծագի:

Ապրիլ 29ին ամբողջալուսինը ժամը 12.45ին արեւելքէն կը ծագի:

Անշուշտ որ, այս դատախօսութիւնները պիտի ընէք, ձեր արշաւներու միջոցին, յարմարագոյն պահերէ օգտուելով: Նկատի առէք որ լուսինը ամէն օր 57 վայրկեան աւելի ուշ մայր կը մտնէ: Երբ լաւ մը ուսումնասիրէք լուսնի շարժումները եւ սորուեցնէք այդ ձեր Գայլիկներուն, կրնաք նաեւ իրր խաղ եւ պատմութիւն, հարցնել ձեր Գայլիկներուն: Նաեւ ջանաղէք հետաքրքրական պատմութիւններ ու առասպելներ հայթայթել լուսնի վրայ, նոյն իսկ ստեղծել ձեր կողմէ, այդպէսով տղաքը ալ աւելի կը խանդավառէք:

Միշտ դէպի լաւ՝  
ՇՐՋԱՀԱՅԵԱՑ ԵՂՋԵՐՈՒ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԻՍԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ



# ՀԱՅ ՍԵՐՈՒՆԴԸ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.

1933-34 կրթական տարեշրջանի վերաբացման առթիւ, հայ մամուլի մէջ ծաղկող սերունդի ազգային դաստիարակութեան ու նկարագրի, իրիտասարդութիւնը համազգային եղակի կազմակերպութեան մը մէջ համախմբելու հարցն է որ յուզուեցաւ ամիսներ շարունակ, վերահարանական կարգով:

Պաշտօնաթերթի վերերեւումը այսօր մեզ հնարաւորութիւն կուտայ ըսելու մեր խօսքը այս շափաղանց բարդ հարցին մասին:

Աւելի քան տասը տարիներէ ի վեր հայութեան կէսը կ'ապրի օտար երկնակամարներու տակ: Ընտանիքի բնօր մեր շաղկին երկրէ երկիր կը թափառինք: Կամայ թէ ահամայ օրը օրին կը հետեւինք այլոց ազգային գրականութեան, հանդիսատես կ'ըլլանք հին թէ նոր, յաղթանական թէ պարտեալ, անկախ թէ ստորուկ ժողովուրդներու ազգային վերելքին, անկումներուն ու դարթօնքին: Չմնաց օտար լեզու մը որուն հաղորդ չըլլանք:

Այսու ամենայնիւ դեռ յամառօրէն կառչած կը մնանք մեր մտածելու, գործելու անօրինակ եղանակին: Կարծէք ոչինչ տեսած, կարդացած ու սորված ըլլայինք:

Ինչո՞ւ այս նախաբանը:

Տարբեր ժողովուրդներու մէջ, սերունդներու ուսուցման, դաստիարակուեան հարցերը հրապարակ չի դրելր այս ձեւով որպիսին մենք հանդէս կը բերենք:

Իւրաքանչիւր ազգ, ազատագրուած թէ ստորուկ, իրենց զաւակները ուսուցանելու դաստիարակելու, կրթելու, անոնց նրկարագիրը կերտելու մասնաւոր դրութիւն մ'ունի, որուն ծանօթ են միայն պատկան օրդովուրդի համապատասխան օրկանները: Ազգեր իրենք ալ անգիտակ են իրենց արուած ուսուցումի, դաստիարակութեան՝ ըլլայ ձեւին թէ նպատակին: Օ-

տար թերթերու մէջ մենք շատ քիչ անգամ կը հանդիպինք սերունդի ընդհ. կրթութիւնը շօշափող նիւթերու: Ընդհանուր, դանդաւածային շարժում մը ստեղծելու սկէտքի մը պարագային թերթերու մէջ կցկտուր, քօղաթկուած խօսքեր միայն կը փոխանակուին. հանրութիւնը կը կարգայ ու կ'անցնի: Մինչ քիչ մը անդին հարցը մասնապէսներու լայն ժողովի մը մէջ կ'ընտանմնասիրուի, ձեւ ու կերպարանք կ'առնէ, եւ այսքան: Այլ եւս նա կը դառնայ տուեալ ժողովուրդը հաւաքական սփականութիւնը՝ գաղանիքը:

Իսկ ի՞նչ կ'ընենք մենք: Հաւար է որ կը բարձրանայ, գաղութէ գաղութ աւելի քան ութ ամիսներէ ի վեր:

Վրէ՛ժ, վրէ՛ժ կ'աղաղակեն մեր երիտասարդ ընկերները, խանդավառ ու ատելավառ: Եթէ նոր սերունդը փրկելու, գայն քաղաքացիացնելու հարց կայ, ի՞նչ հարկ պտոտ խօսքերու, նամանաւանդ երբ ոչ մէկն ու միւսը հրապարակ կ'ելնէ նախաձեռնելու ու մարելու այն կրակը որ անկասկած մեն մի գիտակից հայու օրուայ մղձաւանջը կը կազմէ:

Անմիջապէս ըսենք թէ ազգին ապագայ գոյութեան հետ կապ ունեցող նման վարման-ծրագիրներ 12 տարիներէ ի վեր կը լսենք: Խորհրդատուներու, ծրագրողներու ստուար բազմութիւն մը կը հաշուենք գաղթաշխարհի մէջ: Մինչ չկրցանք ըմբռնել ամէն մէկս թէ այս պահուս փրկատուածը գործնական մարդն է:

Մարդ մը — կամ հաւաքականութիւն մը — որ սերունդը մէկտեղելու, ցանկալի շարժումը կազմակերպելու ջիղը ունենայ, ըմբռնած ըլլայ հարցը վր բոլոր ներս — դրսերեւոյթով, հաւատաւոր «հայրենիքը ամէն բանէ վեր» կարգախօսին, ողջմիտ ու հեռատես, նամանաւանդ սակաւախօս հայ մարդը, ոչ թէ դասակարգային անհատը:



Ամէն անանք որոնք հաղարաւոր հայ-  
արդիներու կրթութիւնը իրենց ձեռքը ա-  
ռած են, ժամանակին հետ քալելու հա-  
մար, պարտաւոր են յետագարձ ակնարկ  
մը թողուլ իրենց կրթական ծրագրին վը-  
քայ, նուազ կամ առաւել որդեգրելու փո-  
փոխութիւններ, սրբազրութիւններ, ո-  
րոնք կը պարտադրուին փորձառութեան,  
գիտական եղանակներու ձեռք բերած ար-  
դիւնքներու հետեւանքով: Այս տեսակէ-  
տէն մէջնակց գրուած հարցը հանդամանո-  
քէն, իր շօր շոր վիճակին մէջ ցարդ ոչ  
ոք մտապրած է քննել: Թեքթերու մէջ  
լուի պեղեցիի քանկութիւններ յայտնուած  
են:

Մեր նորատակէն դուրս է նման ձեռի  
աշխատանք: Ընդհանրապէս, պէտք է  
մանրացնել, պեղել հարցը:

Ուրեմն, նախ տեսնենք թէ ի՞նչ բան է  
ուզուածը:

Գաղթաշխարհի մէջ հասակ նետող սե-  
րունդը համազանակցային կապերով զօ-  
ղել իրարու, տալ անոր ազգային դաս-  
տիւրակութիւն մը, կերտել անոր ազգա-  
յին նկարագրը միօրինակ մէթոտով մը:

Ս. ր. յարարեցական չորս խնդիրներ  
մէք աչքին կը դարձնեն անխուսափելիօրէն՝

Ա. Ազգ. դաստիարակութիւն.

Բ. Ազգ. նկարագիր.

Գ. Մերունցի հոգեբանական ախտա-  
հանաչութիւն.

Դ. Մերուդի մէկտեղում:

Այժմ վերջնենք իւրաքանչիւր հարցը ա-  
ռանձինն ու ջանանք ենթարկել զայն ման-  
րակէ՛լ յոք նուրթեան մը:

Օ. ԵԱԶՄԱՃԵԱՆ

(Դարուցակի)



ՓԱՐԻԶԻ Է.Պ.Ը Մ.Ի ՍԳԱՇԻՏՆԵՐԸ ԺԸՆՍԻԻ ՄԵՋ



# Հ.Մ.Ը.Մ. ԸՆՏԱՆԻՔ

Հ. Մ. Ը. Մ. ի

ՊԵՏՐՈՒԹԻ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Կը տեղեկանանք թէ յունուար 7ին Հ. Մ. Ը. Մ. ի Պէյրութի Սկաուտները իրենց խմբապետի՝ Էդր. Ա. Հսաճեանի առաջնորդութեամբ ու Արքանանցի սկաուտներու ընկերակցութեամբ ներկայացած են Լիբանանի նորընտիր նախագահ՝ Հապիպ փաշա Սաատի :

Ն. Վ. նախագահը ոտքի կանգնած խոնարհելով մեր զրօշին հետեւեալ խօսքերը կ'ուզէ մեր ազոց .—

«Նախ եւ առաջ իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ հայ ժողովուրդին, որ իր փոքր ներկայացուցիչներով եկաւ պատուելու զիս, եւ կը խոստանամ ամէն կերպ օգտակար հանդիսանալ ձեր սկաուտական կազմակերպութեան. ըրէ՛ք ինչ որ պէտք է ձեր Միութիւնը առաջ տանելու համար. ես խորապէս ազդուած եմ Լիբանանցի եւ Հայ սկաուտներու եղբայրակցութենէն, որ իրենց զրօշները պարզած կողք կողքի՝ եկան ինձ շնորհաւորելու : Կը մաղթեմ որ այս եղբայրութիւնը յարատեւ ըլլայ եւ միշտ իրարու նեցուկ դաննաք» :

Նախագահին այս խօսքերուն մեր եղբայրը պատասխանած է՝

«Վսեմափայլ Տէ՛ր,

Քոյլ առեէք ինձ, իմ եւ իմ սիրելի սկաուտներուս կողմէ շնորհաւորութիւններս յայտնելու Ձերդ վսեմութեան մէնք՝ հայ սկաուտներո՛ւ պատրաստ ենք ծառայելու մեր Երկրորդ հայրենիքին եւ կէս առ կէս գործադրելու Ձերդ վսեմութեան խրատքանչիւր հրահանգը» :

Վերադարձին մեր եղբայրները Հ.Մ. Ը.Մ. ի ակումբը հաւաքուելով, կ'ուսանեն սերտ յարաբերութիւններ պահել իրարու հետ :

ՆԱՆՕԹ Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿ  
Պ. Լ. ԱԲԳԱՐԵԱՅ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ  
ՀԱԼԷՊ


Հաստատի ազգայնէ՛ կ'իմանանք թէ ծանօթ Հ.Մ.Ը.Մ. ակն ժարդիչ Պրն. Ա. Արզարեան որ երկար առնէ ի վեր կիսրասի Մէլքոնեան Հաստատութեան մէջ իրր Մարդիչ - Ակտիւտ պեա կը պաշտօնավարէր ընտանեօք Հալէպ է վերադարձած ու ըստ առաջնոյն ձեռնարկած է Հ.Մ.Ը.Մ. ի գործին :

ՊՐԱՄ ԿԱՅԾՄԿ ԵՒ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ

Մեզ կը հաւաստիացնեն թէ յունական բանակի պահեստի սպաներէն Պրն. Արամ Կայծակ որուն յունահայ գաղութի տարիներէ ի վեր մատուցած ծառայութիւնները մեզ ծանօթ են, այս անգամ զիմելով Յունաստանի պատերազմական նախարար Զօրավար Քօնտիլիսի ապահոված է 150 ձեռք սկաուտական հագուստ :

Պրն. Ա. Կայծակ տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ. ի Ֆիքսի (Աթէնք) Մ.Ճիւղի պատ. նախագահն է, միշտ ալ մօտէն հետաքրքրուած է Հ.Մ.Ը.Մ. ի սկաուտներով :


Շնորհակալութիւն մեր մեծ հայրենասէրին :



Քոյր Սկաուտ, դադրէ եւ դադրեցուր քո քոյրերը քալածուրեան, լացի ու ողբի մայր ըլլալէ :

Քոյր Սկաուտ, քո միջոցադ է որ սիրտի հոգեփոխեմի հայ քնատնիքն ու Հայոք թիւնը :





ԳԱՅ

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՖՈՒԹՊՈՒ

Հ.Մ.Ը.Մ.ի Գամապուսի Մ.Ֆիւզը կը յազրէ Լիբանանի Ախոյեան խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուբիոյ շրջանի Փուլիպպի Գամապուսի անպարտելի խումբը, Լիբանանի ախոյեան Բրնէտանսի հետ մէջելով 7 դէմ 1ով յաղթած է:

ՊԱՍԻԵԹ ՊՈՒ

«Հ.Մ.Ը.Մ.»ի Ադեֆասնդրիոյ Մ-Ֆիւզը յաղթական

Ադեքսանդրիոյ հրէական դաշտին վրայ վեար. 7ին տեղի է ունեցած պասքէթ պօլի մրցում մը, Հ.Մ.Ը.Մ.ի Ադեքսանդրիոյ Մ-ճիւզի եւ յունական Միլօն Ա.ի միջև, իրաւարարութեամբ Պրն. Ե. Փասարիսի: Սաղը վերջացած է Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով:

«Հ.Մ.Ը.Մ.» 27 կէտ:

«Մելօն Ա.Ց 14 կէտ:

Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթ պօլի համալուր այս խումբը որ 1931ին Եգիպտոսի առաջին բաժանմունքին ախոյեան հանդիսացած է կը յուսանք թէ այս տարի ալ պիտի պանծացնէ «Հ.Մ.Ը.Մ.»ի յաղթական դրօշը Եգիպտոսի պասքէթ պօլի տարեկան ախոյեանական մրցումներու մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՇԱԻ ԱԼԱԳԵԱԶԻ ԳԱԳԱԹԸ

Լէնինականէն ուրք բանուր - գրօսաշրջիկնէ, Հայաստանի քուրիզմի խոր-

հուրդի նախագահութեամբ, առաջին անգամ ըլլալով, վերելք մը կատարած են դէպի Ալագեազի գագաթը:

Խումբը բարձրացած է 3750 մէքք՝ կարելով 54 ֆիլովէքք նամբայ:

Վերելքի ընթացքին գրօսաշրջիկները ստիպուել են գիշերել ձիւնի վրայ:

Այս միջոցիս, Յունաստանի մէջ — կնդրոն ունենալով Աթէնքը — լուրջ ձեռնարկներ կ'ըլլան վերակազմելու Հ.Մ.Ը.Մ.ը իր բոլոր վարչական թէ կազմակերպչական օրկաններով:

Հ.Մ.Ը.Մ.ի դադարաբերին գինուրադրուած հին թէ նոր, մեր բոլոր ընկերները ճիշդ մ'է որ կ'ընեն, ըմբռնելով օրուայ պահանջքն ու լրջութիւնը:

Այստեղ ալ, ինչպէս Փարիզ եւ այլուր, վերջ գտած են հակամարտութիւններն ու վէճերը:

Մենք այժմէն իսկ Յունաստանի շրջանը կրնանք վերակազմուած նկատել:

Իայց ի՞նչպէս բացատրել հոգիներու ու միտքերու նոյնանման այս ապրումներն ու մտածումները: Մեզմէ ոչ ոք թող փորձէ իմանալ դադանիքը:

Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ ալ դիտցած է վտանգի մը պահուն ձեռք երկարել իր ընկերոջ... բոլորուիլ Միութեան շուրջ՝ պողպատեայ միացեալ ճակատ մը կազմելու համար, մէկդի թողած իր անհատական ետը:

Կը լսենք թէ վերակազմութեան նման աշխատանքներ կը կատարուին նոյնպէս Ռումանիոյ շրջանին մէջ ալ: Ռումանիոյ շրջանային ժողովը արդէն վճռական որոշումներ տուած է:



ՖՈՒԹՊՈՒԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Մարտ 20ին՝

Մղանիա յաղթեց Փօրթուկալի :  
Եղիպտոս յաղթեց Պաղեստինի :

Մարտ 25ին՝

Իտալիա յաղթեց Յունաստանի :  
Իտալիա յաղթեց Յունաստանի  
Միլանի մէջ

ՖՈՒԹՊՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Ամսոյս 25ին՝

Չեխոսլովաքիա յաղթեց Ծրանսայի  
Փարիզի մէջ 2—1ով  
Աւստրիա յաղթեց Չեխոսլովաքիայ  
ժընևի մէջ 3—2ով :

ՔՐՕՍ ՔԸՆԹՐԻ

Մարտ 24ին Կլասկովի ձիարչաւարանին մէջ տեղի ունեցաւ Քրօս Քընթրիի աարեկան միջազգային վազքը, մասնակցութեամբ Անգլիոյ, Ծրանսայի, Սկոտլանդի, Կալիւսի, Իրլանտայի, Պելճիքաձի Ազգային ներկայացուցչական խումբերուն :

Ր Ը Կ Պ Ի

Ֆրանսո - Գերմանի

Ամսոյս 25ին, Հանովրի մէջ (Գերմանիա)

նրա) 18.000 հանդիսատեսներու ներկայութեամբ :

Նախ քան մրցումը երիտասարդ նաւաստաններու տողանցք մը կատարուեցաւ՝ հարիւրեակ մը դրօշակներու ընկերակցութեամբ :

Արդիւնք՝

Ֆրանսա 13 կէտ  
Գերմանիա 9 կէտ

Ծրանսան յաղթանական :

Գերմանացիներու այս խաղին մէջ ունեցած խոռաղիմութիւնը անթխակի է :

ԹԻԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Օքսֆօրտ—Քէմպրիձ Թիավարութեան մրցումը տեղի ունեցաւ Մարտի 17ին Թամսի գետի վրայ՝ 86րդ անգամ ըլլալով :

Քէմպրիձ յաղթեց Օքսֆօրտի՝ կտրելով Փըթնիէն—Մորթլէյք գացող հեռաւորութիւնը 18 վայրկեան 4 երկվայրկեանէն : Մինչդեռ Օքսֆօրտ նոյն հեռաւորութիւնը կտրեց 18 վայրկեան 18 երկվայրկեանէն :

Մրցման ամբողջ տեւողութեան Քէմպրիձի ութեակը մէկ վայրկեանի մէջ 34, իսկ Օքսֆօրտինը 32 թիւ հարուած կուտային ջուրին :

Աւելցնենք թէ այս մրցումը հիմնուած է 1829ին : Յարդ Քէմպրիձ չահած է 44 անգամ, Օքսֆօրտ՝ 40 անգամ :



ՓԱՐԵՁԻ ՀՄԲՄԻ ՍԿՈՒՏՆԵՐԸ ՄԱՐՏԵԼԻՈՅ ՄԷՋ





1. Գառաւորը — Պարո'ն, հակառակ ազնուական ծագում ունենալուց կեղծ թղթագրքւմ կը շինէք:

Ամբաստանեալը — Պարոն գառաւոր, չուն աշխատեցայ կեղծ ըլլալը ծածկել բայց չի յաջողեցայ:

2. Կիրակոս — Գիտե՞ս, պարոն Համբիկ, Պրն. Արբաճամբը դործիս ընկեր ասի, ան իր դրամադուլտիւրը, իսկ ես փորձառութեամբս պիտի դործակցինք:

Համբիկ — Եւ մինչեւ տարեգլուխ ան փորձառութիւնը ձեռք կը ձգէ, իսկ դուն ալ դրամադուլտը:

3. Կիրակոս աղբար — Պրն. մասփաճա'ս, Երէկուան կովի միտէն նորէն ունի՞ս:

Մամվանար — Այո', բաւական ունիմ. սրքա՞ն կ'ուզես. այսօր ամանցուցած եմ. մէկ երկու քիլօ տա՞մ:

Կիրակոս աղբար — Չէ', այդքան չեմ ուզեր, միայն առ կօշիկիս ծակը գոցելու շափ տալ:

4. Յակոբ աղբար — Ծօ' Վահրամ, ըսիր որ այսօր Արբաճամբին պիտի երթալիք ազջկան ձեռքը խնդրելու, ի՞նչ բրբեր գացի՞ր:

Վահրամ — Այո', գացի, փոխանակ ազջկան ձեռքը տալու իր սորը տուաւ:

5. Պետրոսիկ — Մեր աւելին համար կոթ մը կուտա՞ք:

Խանութպանը — Առջի օրուան տուածի՞դ նման:

Պետրոսիկ — Չէ' մայրիկս անկէջ

չուզեր կօր, հայրիկիս կոնակին երկու անգամ դարնելէն կուտեցաւ:

6. Հարիւրապետը — Ֆրանսուա, եթէ գինեմոլ մը չըլլայիր, մինչեւ հիմա ամուսնացն առննապետ մը կ'ըլլայիր:

Ֆրանսուա — Յո՛ւ... գիտե՞ք հարիւրապետ, իմած ժամանակս ես ինծի հազարապետ մը կը դրամ:

7. Արբաճամբ — Տիկի'ն, եկած եմ ձեզ յայտնելու, որ մէկ շարաթուան ընթացքին ձեր շունը վեց անգամ դոքանչ մօրս խածաւ:

— Ծիտակը շատ ցաւալի է, պարո'ն, հաւատացէք, ինչ որ պահանջէք իբր վրնասուց հատուցում ձեզ դո՛հացում պիտի տամ:

— Ընդհակառակն, տիկի'ն, եկած եմ գալն գնելու:

8. Գառաւորը — Պարո'ն, ահա չորրորդ անգամն է որ ալքոլամոլութիւնը պատճառ կ'ըլլայ ձեզ դատարան բերելու:

Ամբաստանեալը — Եւ հակառակ ատոր միշտ ալ զիս կը ձերբակալեն:

9. Ռեսուցիչը — Ըսէ՛ նայիմ, Արշակ, մեծնալու ըլլաս նէ ի՞նչ պիտի ըլլաս:

Արշակ — Ձինուր պիտի ըլլամ:

Ռեսուցիչը — Բայց թշնամին պիտի սպաննէ քեզ:

Արշակ — Այն ատեն թշնամի կ'ըլլամ:

Հաւաքեց՝  
ԵՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ. Ի

ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՏԵՂԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհուպ պատասխանել՝

1. Տեղական Հայ վարժարաններու անուններն ու նշգրիտ հասցէները: Գրպարոցական աշակերտ-ուհիներու մտաւարժութիւնը:

2. Այլ անունով մարզական կազմակերպութիւններու, կամ սկանու խումբերու անուններն ու հասցէները:

3. Մ.Ֆիդելու սկանուներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու քիւրը:

4. Շրջանային եւ Մասնահիւղային վարչութեանց թէ Ատենապետ եւ թէ Ասեկադովիքներու անուններն ու հասցէները:

5. Տեղերու մէջ գտնուող Հայ Աղումներու հասցէները:

6. Շրջաններու մարզական շտաբ խումբերու մէջ իւր յաղթութիւններով անուանի մարզիկներու անուններն ու հասցէները: Ամփոփ տեղեկութիւններ եւրպակայն մասին:

Հ. Մ. Ը. Մ. Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (Կնիք)

Գրացիք թէ՛

Հ.Մ.Ը.Մ.ը սրօրի կանոյքը բարոշիւններու վայր չէ՛: Հ.Մ.Ը.Մ.ը մարզային սիրահարներու Միութիւն չէ՛: Հ.Մ.Ը.Մ.ը քաղաքականութեամբ չգրադէժ. իւր սրտի նպատակն է երոպական առումով վարդաւայ հայ քաղաքացին պատրաստել, փութալով դաշտին վրայ, սրօրի միջոցաւ ու լեռ մագլցելով:

Հ.Մ.Ը.Մ.ը դպրոցը բնութեան ծոցն է:

Հ.Մ.Ը.Մ.ական, բաժանորդագրուեցա՞ր: Քանի՞ թէ՛ք ծախեցիք:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՅՆՆԵՐՈՒՆ

«Հայ Սկանու»ը տեղեկատուութեան քերք չէ՛, այլ տեսակ մը մարզ-սկանուաշխան ուսումնարան: Մարզ. մրցումներ, արշաւներու մասին գրել ամփոփ: Մասնաւորապէս ուժ տալ կրթիչ նիւթերու:

ԱԻՆԼԻ ԾԱՆՐ...

«Հայ Սկանու»ի վերերեւումի առթիւ շրջաններէն ստացած ենք խրատաւորութիւններ. Հ.Մ.Ը.Մ.ականներէ շատեր կը խնդրեն մեզմէ քերքը վերածել շարքաքերքի, խոստանալով օժանդակել մեզ նիւթապէս: Շնորհակալութիւն: Բայց կեանքի ներկայ պայմանները մեզ աւելի հեռաւոր ըլլալ կը պարտադրեն որոշած ենք չառաջնորդուիլ զգացումներով: Ծանր քայլերը մեզ աւելի ապահով կը թուին, քան թէ խանդավառութիւնն ու սրագրկեաց վերելք մը: Շարքաքերք. այո՛, աւելի ուշ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒՆ,

Յաջորդ քիւէն կը սկսնի հրատարակել մեր գիտական, մարզ-սկանուական աշխատակիցներու յօդուածները:

Այս առթիւ պարտք կը համարինք յայտնել թէ քերքն իմբագրական յօդուածը իմբագրական մարմնոյ մեկնաշնորհ չէ՛: Ոեւէ Հ.Մ.Ը.Մ.ական իրաւունք ունի իմբագրական յօդուած դրկելու, պայմանաւ որ իմբագրական - յօդուածի տարագրութիւնը հաստատուած ըլլայ Մ.Նիւրի, Շրջանի վարչութիւններէ միոյն կողմէ:

Թերքի բովանդակութեան, ուղղութեան, զարգացման մասին խորհուրդներ, ցանկութիւններ սիրով կը լսուին: ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



«ՀԱՅ ԱՆԾԱՆՕԹ ՄԱՐԶԻԿԻ ՕՐ»

ՌԻԿՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Արէնքի «Նոր Օր»ի մարգական բըղ-  
րակիցը, խօսելով հայ մարզիկներու վեր-  
ջիւս ունեցած կարգ մը յաջողութեանց  
մասին, կ'առաջարկէ տարուայ մէջ հաս-  
տատել « Հայ Անձանօթ Մարզիկի Օր »  
մը, պատուելու համար մեր ախոյեանե-  
րը:

Մարտ 18- կիրակի օր Սկաուտ վե-  
րին Մարմինը ուխտագնացութիւն մ'էր  
կազմակերպած ի յիշատակ Միութեան  
հնագոյն անդամներէն ողբացեալ Գառլօ  
Պետրոսեանի յիշատակին: Սկաուտ Մար-  
մինը ծրագրած է յաջորդիւ կազմակերպել  
երեք ուխտագնացութիւններ ևս ի յիշա-  
տակ ողբացեալ՝ Քրիսի, Արտաւազդի,  
Գ. Շահինեանի: Երեքն ալ մահացած Բա-  
րիզի մէջ:

Որոտի պիտի ըլլանք մեր քերքի մէջ  
լսել շրջաններու վարչութեանց, մագա-  
կան յանձնախումբերու, ինչպէս նաեւ  
մարզիկներու կարծիքը այս խնդրոյ շուրջ  
որ իրաւամբ այս միջոցիս կը գրադէցնէ  
յունահայ մարգական շրջանակները:

ՄԱՀ ՏԻԿԻՆ ՔՐԻՍԻ

Հ. Մ. Ը. Մ. ԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԾՆՆՈՒՆԴ


Տէր Է. Տիկին Հայկազ Աբէլեան կ'  
ը ծանուցանեն ծնունդը իրենց մանչ գաւ-  
կին: Մեր խնդակցութիւնները:

Մարտի ընթացքին Բարիզի մէջ իր  
հոգին առանդեց ողբացեալ Քրիս Սէ-  
մէրնեանի Տիկինը: Մեր ցաւակցութիւն-  
ները իր գաւկին ու պարագաներուն:

Բ Ա Ր Չ Ր Ա Ց ՈՒ Ր

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄԻՆԸ ՋԵՐՄՕՐԷՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԷ ԲՈՂՈՐ  
ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԻՐ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՆ ԲԵՐԵԼ  
ՍՊՐԻԼԵԱՆ ՍԳԱՀԱՆԴԵՄՆԵՐՈՒՆ:

Բ Ա Ր Չ Ր Ա Ց ՈՒ Ր





---

---

Հ . Մ . Ը . Մ .

Գեղարուեստական շքեղ երեկոյք-Պարահանդէս  
Կազմակերպուած Ռէնսի - Ռոնիի Մանանիւղի  
Կողմէն

28 Ապրիլին ժամ 9էն առաւօտ

---

---



